ԾՐԱԳԻՐ

ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ՝
ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԻԱՎՈՐ ՄԻՆՉԵՎ ՀԻՆԳ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԳՆԱՀԱՏՎԱԾ
ԱՐԺԵՔՈՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ՝ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Սույն ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մարտի 24-ի N 298-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ պետական հիմնարկներին և կազմակերպությունների ամրացված՝ մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի (այսուհետ՝ «Գույք»)՝ օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում պահառության ծառայություններ մատուցելու եղանակով:

Գույքի պահառությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 10-ի N 1033-Ն որոշմամբ այդ նպատակով ՊՈԱԿ-ին հատկացված՝ Երևան քաղաքի Հաղթանակի 2-րդ փողոցի 79 հասցեում գտնվող տարածքում (այսուհետ՝ «պահառության տարածք»):

Ծրագրի հիմնական խնդիրները՝

- պահառության տարածք ներկայացված Գույքի տեխնիկական վիճակի նախնական զննություն՝ Գույքը հանձնող պետական հիմնարկների (կազմակերպությունների) լիազոր ներկայացուցիչների մասնակցությամբ, կազմելով համապատասխան արձանագրություն,
- Գույքը, դրա փաստաթղթերն ու պատկանելիքները Գույքը հանձնող հիմնարկների (կազմակերպությունների) լիազոր ներկայացուցիչներից պահառությանն ընդունում՝ կազմելով հանձնման-ընդունման համապատասխան ակտ,
- Գույքի ապահով պահառություն,
- Գույքի հավանական գնորդների համար այն զննելու հնարավորությունների ապահովում,
- Գույքի, դրա փաստաթղթերի ու պատկանելիքների հանձնում Գույքի օտարման գործընթացի արդյունքներով որոշված դրա նոր սեփականատիրոջը՝ կազմելով հանձնման-ընդունման համապատասխան ակտ,
- Գույքի ու դրա շարժի վերաբերյալ տեղեկատվության միասնական վիճակագրության վարում:

Ծրագրի նպատակը՝

Ապահովել գույքի օտարման գործընթացի առավել թափանցիկությունը և արդյունավետությունը՝ Գույքի արտաքին զննությունը մատչելի դարձնելու և օտարման գործընթացի ամբողջ տևողության ընթացքում Գույքի արժեքի նվազմանը սպառնացող ռիսկերը հնարավորինս նվազեցնելու միջոցով:

Ծրագրով նախատեսված աշխատանքները սկսվել են իրականացվել 2016 թվականի ապրիլի մեկից:

2016 թվականի ինը ամսվա ընթացքում Ծրագրով նախատեսված աշխատանքների փաստացի ցուցանիշները՝

- պահառության է ընդունվել 455 միավոր Գույք (452 միավորը՝ տրանսպորտային միջոցներ, 3 միավորը՝ այլ շարժական գույք),
- Գույքի նոր սեփականատերերին է հանձնվել 138 միավոր Գույք (բոլորը՝ տրանսպորտային միջոցներ),
- 2017 թ. հունվարի 01-ի դրությամբ պահառության ներքո գտնվել է 317 միավոր Գույք (314 միավորը՝ տրանսպորտային միջոցներ, 3 միավորը՝ այլ շարժական գույք):

2017 թ. Գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկն ու հիմնավորումն

2016 թ. նույնաբովանդակ Ծրագրով նախատեսված է եղել կազմակերպել միաժամանակ միչև 150 միավոր տարատեսակ Գույքի պահառություն, ինչի համար նույն թվականին իրականացվել էին.

- պահակատան և 40 մ^2 ընդհանուր մակերեսով 2 աշխատասենյակների կահավորում (գրասենյակային գույք, համակարգչային տեխնիկա, կապի միջոցներ, Գույքի փաստաթղթերի ու պատկանելիքների պահպանման մետաղյա պահարաններ և այլն),
- տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի տեխնիկական սպասարկման (պահառության ընթացքում առաջացող հնարավոր անսարքությունների վերացման) համար նախատեսված գործիքների ու սարքերի ձեռքբերում,
- պահառության տարածքում էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, ինտերնետ կապի, ջրամատակարարման, կոյուղու և աղբահանության կազմակերպում,
- պահառության տարածքի մի մասի մաքրում (հարմարեցում)՝ տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար,
- պահառության տարածքի մի մասում (նախատեսված տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար) արտաքին գիշերային լուսավորության համակարգի տեղադրում,
- պահառության տարածքի մի մասում (նախատեսված տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար) շուրջօրյա տեսահսկման համակարգի տեղադրում:

2017 թվականի ծախսային պարտավորությունների հաշվարկը կատարվել է հաշվի առնելով.

- 2016 թվականի ինը ամսում Գույքի պահառության համար կատարված փաստացի ծախսերը,
- 2016 թվականին նախատեսված որոշ ծախսերի մասամբ չկատարման հանգամանքը, պայմանավորված պահառության տարածքում նախապատրաստական աշխատանքների (աշխատակիցների հավաքագրում, էլեկտրամատակարարման, արտաքին գիշերային լուսավորության համակարգի տեղադրում, շուրջօրյա տեսահսկման համակարգի տեղադրում, ջրաչափի տեղադրում, համապատասխան պայմանագրերի կնքում, աղբարկղների տեղադրում և այլն) կատարման անհրաժեշտությամբ:

Ծրագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար մեկ տարվա հաշվարկով ծախսերը դասակարգվում են հետևյալ կերպ

Հոդվածի անվանումը	Համարը /հազ. ՀՀ դրամ/
Աշխատանքի վարձատրություն	17140.0
Էներգետիկ ծառայություններ	679.2
Կոմունալ ծառայություններ /Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ/	45.5
Կապի ծառայություններ	210.0
Համակարգչային ծառայություններ	60.0
Նյութեր և պարագաներ	840.0
Մասնագիտական ծառայություններ	1298.8
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	474.0
Գրասենյակային նյութեր և հագուստ	350.9
Տրանսպորտային նյութեր	420.0
Պարտադիր վճարներ /աղբահանություն/	229.1
Այլ ծախսեր	75.6
ԸՆԴԱՄԵՆԸ	**21823.1**

1.Աշխատանքի վարձատրություն, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը

Հ/Հ	Պաշտոնը	Հաստիք	Դրույքը	Սահմանված հավելավճար	Ամբողջ դրույքը
1	Սպորտաբաժանման ղեկավար	1	153 000	34000	187000
2	Փաստաթղթեր ձևակերպող	1	148800	15500	164300
3	Էլեկտրագետ	1	72752	36376	109128
4	Վարորդ Ավտոփականագործ	1	115000	-	115000
5	Պահակ	8	75000	22 500	780000

6	Հավաքարար	1	72752		72752
	Ընդամենը	**13**	**1162304**	**265876**	**1428180**

Մեկ ամսվա աշխատանքի վարձատրության ընդհանուր գումարը կազմել է 1428.2 հազ. ՀՀ դրամ, իսկ 2017 թ. տարեկան ընդհանուր գումարը՝ 17140.0 հազ ՀՀ դրամ

Հավելավճարներ.

1. *ՊՈԱԿ-ի՝ պահառությունն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին և փաստաթղթեր ձևակերպողին* արտաժամյա և ոչ աշխատանքային օրերին հնարավոր աշխատանքի համար, համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների,
2. *ՊՈԱԿ-ի՝ պահառությունն իրականացնող ստորաբաժանման էլեկտրագետին՝* համաձայն "Ծանր վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը հաստատելու մասին" ՀՀ կառավարության 02.12.2010 թվականի N 1698-ն որոշման պահանջների,
3. *ՊՈԱԿ-ի՝ պահառությունն իրականացնող ստորաբաժանման անընդմեջ (հերթափոխային) ռեժիմով աշխատող պահակներին՝* համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 143 հոդվածի պահանջների:

2. Էներգետիկ ծառայություններ

էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկ /բացառությամբ ջեռուցման/

ՀՀ		Քանակ (հատ)	Հզորությունը	Շահագործման ժամերի տարեկան քանակը	Շենքերի և շինությունների մակերեսը (քառ/մետր)	Տարեկան ծախսի նորմը (կվտ.ժ)	Ընդամենը տարեկան ծախսի նորմը (կվտ.ժ)	Ընդամենը էլեկտրաէներգիայի ծախս (հազ. դրամ)
1	2 աշխատասենյակ /40քառ.մ/ 1 պահակակետ /10քառ.մ/	x	x	x	50	29.32	1466.0	67.7
3	Համակարգիչների (1 հատը ներառում է տպիչ սարք) և այլ կազմտեխնիկայի ծախսը, 8-ժամյա աշխատանքային օրվա համար	1	x	x	x	1100	1100.0	50.8
4	Այլ հատուկ սարքեր (արտաքին լուսավորություն տեսահսկման համակարգ)			11978.0	0.0	0.0	10994.8	491.5
4,1	Արտաքին լուսավորություն ցերեկային ժամերի համար	26	0.1	879			2285.4	105.6
4,2	Արտաքին լուսավորություն գիշերային ժամերի համար	26	0.1	2339	x	x	6081.4	220.1
4,3	Տեսահսկման համակարգի շահագործում ցերեկային ժամերին	1	0.3	5840	x	x	1752.0	80.9
4,4	Տեսահսկման համակարգի շահագործում գիշերային ժամերին	1	0.3	2920	x	x	876.0	31.7

4,5	Կենցաղային սարքեր	2	0.2	2880			1152.0	53.2
	Ընդամենը		x	x	x	x	**17412,8**	**396.7**

2017 թվականի ջեռուցման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկ

h/h	Բնակավայրը	Շենքի տեսակը (քար / պանելային, միաձույլ)	Շենքի ծավալը (խոր/մետր) հաշվարկված արտաքին չափերով	այդ թվում՝ գբաղեցրած տարածքի ծավալը (խոր. մետր)	Ջերմային էներգիայի տարեկան ծախսի նորմը ³կվտ.ժ/ խոր.մետր	Ընդամենը տարեկան ծախսի նորմը (կվտ.ժ)	*Ընդամենը ջեռուցման համար էլեկտրաէներգիայի ծախս (հազ. դրամ)*
1	2 աշխատասենյակ /40 քառ.մ/, 1 պահակակետ /10 քառ.մ/ 3 մ բարձրությամբ	քար		150	40.8	6120.0	282.7
	Ընդամենը	x	x	x	x	**6120.0**	**282.7**

Ընդամենը՝ էլեկտրաէներգիայի ծախս **679.2 *հազ. դրամ***

Էներգետիկ ծառայությունների ծախսերի հաշվարկը կատարվել է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.04.2005 թ N 629-Ն որոշման N 1 հավելված՝ «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների վարչական շենքերի ջեռուցման, համար ջերմային էներգիայի տարեկան ծախսի նորմաներ», ինչպես նաև 2016 թվականին նույն նպատակով կատարված փաստացի ծախսի քանակը:

4. Կոմունալ ծառայություններ.

Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ

Աշխատանքային օրերի համար /ստորաբաժանման աշխատակիցներ, Գույքը հանձնող անձիք, ՊՈԱԿ-ի գնահատման բաժնի աշխատակիցներ, Գույքի հավանական գնորդներ և այլն/ 25 մարդ x 250 օր = 6250 մարդ օր x 30 լիտր /մեկ մարդու համար / x 0.180 դրամ = 33.8 հազ ՀՀ դրամ

Ոչ աշխատանքային օրերի համար /ստորաբաժանման աշխատակիցներ/ 6 մարդ x 115 օր = 690 մարդ օր x 30 լիտր /մեկ մարդու համար/ x 0.180 դրամ = 3.7 հազ ՀՀ դրամ

Տնտեսական կարիքների համար 8.0 հազ ՀՀ դրամ

Ընդամենը ***45.5 հազ ՀՀ դրամ***

5. Կապի ծառայություն /ներառյալ ինտերնետային կապի ծառայություն/ համաձայն պայմանագրերի

Հեռախոսակապ 1 x 2000 x 12 = 24.0 հազ ՀՀ դրամ /մեկ հեռախոսի համար սահմանված հաստատուն ծախս/

Ինտերնետային կապ 1 x 15500 x 12 = 186.0 հազ. << դրամ /տեսահսկմնան համակարգի համար/

Ընդամենը ***210.0 հազ.<< դրամ***

6. Համակարգչային ծառայություններ

/համակարգչի սպասարկում, քարթրիջի լիցքավորում/

Ընդամենը ***60.0 հազ << դրամ***

7. Գրասենյակային նյութեր, հագուստ, *այդ թվում*

Գրասենյակային գույք (1 հատ բազմաֆունկցիոնալ տպիչ սարք)՝ 130.0 հազ. << դրամ

Գրասենյակային նյութեր և պարագաներ 190.9 հազ. << դրամ

Հատուկ հագուստ- անձրևանոցներ (տրանսպորտային միջոցների զննության, ընդունման, հանձնման, գնահատման աշխատանքները անձրևային եղանակին կազմակերպելու համար, քանի որ տրանսպորտային միջոցները կայանված են բացօթյա)՝ 30.0 հազ. << դրամ

ընդամենը **350.9 հազ << դրամ**

8. Տրանսպորտային նյութեր *(ավտոմեքենայի վառելիք)*

Միջին օրական վազքը՝ 60 կմ

60 կմ x 250օր = 15000 կմ x 8 լիտր = 1200 լիտր

1200 x 350 դրամ/1 լիտրը = ***420,0 հազ << դրամ***

Կապված պահառության տարածքում նախապատրաստական ու կազմակերպչական աշխատանքների իրականացման հետ 2016 թվականին վառելիքի ծախսը ավելին է եղել քան նախատեսվում է 2017 թվականին:

9. Կենցաղային նյութեր,

Տարածքում մաքրության աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ նյութեր, պարագաներ, շենքերում ու պահառության տարածքում կատարվելիք ընթացիկ (ներառյալ՝ վերանորոգման) աշխատանքների և վթարների ու անսարքությունների վերացման համար անհրաժեշտ նյութեր, պարագաներ, շենքերի ու պահառության տարածքի լուսավորությունն ապահովելու համար անհրաժեշտ պարագաներ և այլն:

ընդամենը ***840.0 հազ. << դրամ***

Հաշվարկը կատարվել է հաշվի առնելով 2016 թվականին փաստացի կատարված ծախսը, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ հանդիսացող գույքի կայանման համար նախատեսված տարածքի ընդլայնման անհրաժեշտությունը:

10. պահառության տարածքում նախատեսված 150 միավոր Գույքի փոխարեն 400 միավորի պահառությունը կազմակերպելու համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսերը

Հաշվի առնելով 2016 թ. Ծրագրով նախատեսվող և իրականում պահառությանն ընդունված Գույքի քանակների մեծ տարբերությունը Ծրագրով 2017 թ. նախատեսվում է կազմակերպել միաժամանակ միչև 400 միավոր տարատեսակ գույքի պահառություն, ինչի համար նախատեսվում է.

- Ընդլայնել պահառության տարածքի՝ տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար նախատեսված հատվածը (հիմնականում նյութերի և պարագաների ծախս),

- Ընդլայնված հատվածում տեղադրել արտաքին գիշերային լուսավորության (10 նոր կետեր) և շուրջօրյա տեսահսկման (5 նոր կետեր) լրացուցիչ համակարգեր:

2016 թվականին պահառության տարածքում տեղադրվել է արտաքին գիշերային լուսավորության 16 կետ, ինչի համար կատարված ծախսը կազմել էր 127 8.2 հազ. ՀՀ դրամ, հետևաբար 1 նոր կետի արժողությունը կկազմի 79888 ՀՀ դրամ, իսկ ***լրացուցիչ տեղադրման ենթակա գիշերային լուսավորության 10 կետերի համար ընդհանուր ծախսը կկազմի 798.8 հազ. ՀՀ դրամ***
2016 թվականին պահառության տարածքում տեղադրվել է արտաքին շուրջօրյա տեսահսկման 10 կետ, ինչի համար կատարված ծախսը կազմել էր 1000.0 հազ. ՀՀ դրամ, հետևաբար 1 նոր կետի արժողությունը կկազմի 100.0 ՀՀ դրամ, իսկ ***լրացուցիչ տեղադրման ենթակա շուրջօրյա տեսահսկման 5 կետերի համար ընդհանուր ծախսը կկազմի 500.0 հազ. ՀՀ դրամ***

Որոշ դեպքերում անհրաժեշտություն է առաջանում առավել արժեքավոր, կամ արտաքին ազդեցություններից վնասմանն արագ ենթարկվող տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի պահառությունն իրականացնել փակ կամ ծածկված տարածքներում: Այդ պատճառով պահառության տարածքի շուրջ 150 քառ մետր հատվածը վերը նշված պահանջներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է կատարել որոշակի աշխատանքներ, ***ինչի համար անհրաժեշտ է 474.0հազ ՀՀ դրամ***

11. Աղբահանություն

Աղբահանության վճարի հաշվարկը կատարվել է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 23 դեկտեմբերի 2011 թվականի Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու թիվ 360-Ն՝ որոշման IIIհոդվածի 3 կետով հաստատված ամսական դրույքաչափով /1քառ, մետրի համար 8 դրամ / Տարածք 2386.5 X 8 =19092X12=
229.1 հազ. ՀՀ դրամ

12 Այլ ծախսեր

ընդհանուր ծախսերի 0.35 տոկոսը՝ 75.6 հազ. ՀՀ դրամ

Պետական գույքի գույքագրման և
գնահատման գործակալություն ՊՈԱԿ

Գլխավոր տնօրեն Հովհաննիսյան